

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Ի՞նչ էՆ ԿԱՐԾՈՒՄ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ

-Զեկույց-



Ծրագիրն իրականացվել է
Բաց Հասարակության
Հիմնադրամներ Հայաստանյան
գրասենյակի օժանդակությամբ

Մահմանադրական իրազեկման ծրագիրը իր երախտագիտությունն է հայտնում հարցմանը մասնակցած փորձագետների հիմնական խմբին՝ հետազոտությանը մասնակցելու, ինչպես նաև տվյալների հավաքագրման ընթացքում օգտակար մեկնաբանություններ ու դիտողություններ կատարելու համար:

Հետազոտությանը օժանդակելու ու փորձագիտական կարծիք փոխանակելու համար Ծրագիրը իր շնորհակալությունն է հայտնում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, ԵՊՀ Եվրոպական ուսումնասիրությունների կենտրոնին, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնին, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիային, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնին, ՀՀ փաստաբանների պալատին, Հելսինկյան ասոցիացիա իրավապաշտպան կազմակերպությանը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակին, Համայնքների ֆինանսիստների միավորմանը, Նոր Մահմանադրություն հասարակական դաշինք- նախաձեռնությանը, ինչպես նաև ԱԺ պատգամավորներ Թևան Պողոսյանին և Էդմոն Մարուքյանին:

Բովանդակություն

Համառոտ ամփոփում.....	3
1. Նախաբան.....	6
2. Մեթոդաբանություն	6
3. Հիմնական արդյունքներ.	8
3.1. Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն.....	8
3.2. Իշխանությունների նախաձեռնության նկատմամբ վստահություն.....	11
3.3. Մարդու իրավունքներ.....	12
3.4. Կառավարման ձևի փոփոխություն.....	13
3.5. Ընտրական համակարգ.....	15
3.6. Դատական համակարգ.....	16
3.7. Հանրաքվե.....	17
3.8. Տեղական ինքնակառավարման համակարգ.....	18
4. Առաջարկություններ.....	21
Հավելված: Հարցաշար.....	23

Համառոտ ամփոփում

Այս զեկույցում ներկայացված հետազոտությունն իրականացվել է Սահմանադրական իրազեկման ծրագրի շրջանակներում՝ սահմանադրական բարեփոխումների նոր զարգացումների վերաբերյալ ՀՀ փորձագետների կարծիքը վեր հանելու ու վերլուծելու նպատակով: Զեկույցն ամփոփում է անկախ փորձագետների կարծիքը սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտության, 2014 թ. ապրիլին հրապարակված Հայեցակարգի նախագծում տեղ գտած մոտեցումների վերաբերյալ, ինչպես նաև անդրադառնում է փորձագիտական հանրության այն առաջարկություններին, որոնք Հայեցակարգում տեղ չեն գտել:

Օրագիրը մասնագիտական գնահատականների հավաքագրումն իրականացրել է հեռակա հարցման (surveys) և խորին հարցազրույցների (in-depth interviews) միջոցով: Փորձագետների ընտրության չափանիշներ են հանդիսացել վերջիններիս անկախությունը, իրավակիրառ պրակտիկայում աշխատանքային փորձը, ինչպես նաև գիտական փորձը՝ իրավական ու քաղաքական գիտությունների այն ոլորտներում, որոնք առնչվում են մարդու իրավունքների, կառավարման ձևի, կուսակցական և ընտրական համակարգի, ինչպես նաև սահմանադրաիրավական այլ խնդիրների հետ: Ըստ այդմ, հարցման մասնակիցները համամասնորեն ընտրվել են իրավակիրառ պրակտիկայում, հասարակական կազմակերպություններում, ինչպես նաև գիտական ոլորտում ներգրավված մասնագետներից: Հարցմանը մասնակցելու հրավեր է ուղղվել 35 փորձագետի, որոնցից հարցմանը մասնակցել է 22-ը:

Հարցաշարը կազմվել է Հայեցակարգում առաջ քաշված հիմնական դրույթների հիման վրա և ներառում է 18 հարց: Առաջնային տվյալները հավաքագրվել են 2014 թ. ապրիլի կեսերից մինչև մայիսի վերջ ընկած ժամանակահատվածում:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս՝ փորձագետների շրջանում գերակշռում է այն կարծիքը, որ սահմանադրական փոփոխություններն անհրաժեշտ են: Փորձագետների մեծ մասը համարում է, որ նման անհրաժեշտությունը հատկապես պայմանավորված է դատական համակարգի անկախության երաշխիքների բացակայությամբ: Այս առումով հատկանշական է, որ փորձագետներից շատերը ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու սահմանադրական բարեփոխումների ներուժը գլխավորապես կապում են արդարադատության ու դատական համակարգի անկախության ամրապնդման հետ:

Մինևույն ժամանակ, հետազոտության հարցումները բացահայտում են իշխանությունների կողմից նախաձեռնած բարեփոխումների նկատմամբ վստահության ցածր մակարդակ: Սահմանադրական փոփոխությունների նկատմամբ վստահության պակասը հիմնականում պայմանավորված է քաղաքական շարժառիթներով, քանի որ հարցվածների մեծ մասը մտավախություն ունի, որ սահմանադրական փոփոխություններն արվում են իշխանության վերարտադրության նպատակով:

Թեև հարցված փորձագետների մեծամասնությունը դրական է գնահատում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությունը, հարցվածներից միայն քչերն են ակնկալում, որ այդ

փոփոխությունները ունեն մարդու իրավքունքների պաշտպանության ոլորտում զգալի ներդրում կատարելու ներուժ:

Կառավարման համակարգի վերաբերյալ հայեցակարգային մոտեցումների հանդեպ դիրքորոշումները տարբեր են: Փորձագետների մեծ մասը կարծում է, որ պետության մեջ առկա խնդիրների ու սահմանադրական ցածր մշակույթի պատճառը ուղղակիորեն պայմանավորված չէ կառավարման համակարգով: Հարցմանը մասնակցած փորձագետների շրջանում գերակշռում է այն կարծիքը, որ խորհրդարանական համակարգին անցումը ներկայումս նպատակահարմար չէ: Խորհրդարանական համակարգին դեմ արտահայտված մասնագետների մոտ հատկապես մտավախություն է առաջացնում այն հանգամանքը, որ Հայաստանում դեռևս կայացած չէ կուսակցական համակարգը և որ խորհրդարանական համակարգին անցումը կարող է ավելի խթանել դոմինանտ կուսակցության կողմից իշխանության նկատմամբ մենաշնորհը:

Գործող կիսանախագահական կառավարման ձևի պահպանման դեպքում ՀՀ Նախագահի ու Ազգային Ժողովի ընտրությունները միաժամանակ անցկացնելու առաջարկին փորձագետների գերակշռող մեծամասնությունը բացասական է վերաբերվում: Արտահայտված մտավախությունների շարքում առավել հաճախ հնչել է այն, որ անցումային ժողովրդավարություններում ընտրությունների մեկտեղումը հղի է իշխանության վերարտադրման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ:

Թեև փորձագետների գերակշիռ մասը տեսնում է ընտրական համակարգի որոշ փոփոխությունների անհրաժեշտություն, այստեղ ևս ակնառու է այն համոզմունքը, որ արդար ընտրությունների կազմակերպումը նույնպես պայմանավորված չէ ընտրական համակարգով:

Դատական համակարգի կայացմանն ուղղված հայեցակարգային դրույթները փորձագետների կողմից գնահատվել են որպես բավականին ընդհանրական: Կոնկրետ առաջարկներից մեկի՝ դատական ատյանների թվի կրճատման վերաբերյալ փորձագիտական հանրությունն ունի հակադիր կարծիքներ, մինչդեռ երդվյալ ատենակալների ինստիտուտի նկատմամբ գերակշռում է հստակ թերահավատությունը:

Հայեցակարգի այն առաջարկությունը, ըստ որի հանրաքվեի են դրվելու երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը, դրական է ընդունվում հարցված փորձագետների մեծամասնության կողմից:

Փորձագետները ընդհանուր առմամբ դրական են արձագանքել տեղական ինքնակառավարման ոլորտի կատարելագործման վերաբերյալ հայեցակարգում արտահայտված մոտեցումներին, մասնավորապես՝ ավագանու դերի բարձրացման մտադրություններին: Այնուամենայնիվ, նրանց մեծ մասը կարծում է, որ հայեցակարգի՝ տեղական ինքնակառավարմանը նվիրված գլուխը բավականին անառակայական է, քանի որ դրանում տեղ չեն գտել տեղական ինքնակառավարման ինստիտուտի զարգացմանն ուղղված հստակ առաջարկություններ:

Զեկույցն ամփոփում է նաև փորձագետների առաջարկությունները: Հարցված փորձագետների միայն մի մասն է ներկայացրել առաջարկություններ: Ընդհանուր առմամբ, ներկայացված առաջարկություններից շատերը ևս բավականին ընդհանրական են (օրինակ՝ ամրապնդել դատական իշխանության անկախությունը): Առավել հստակ

ձևակերպված ու հաճախ հանդիպող առաջարկություններից է ընտրությունների ավարտին ընտրողների ցուցակի հրապարակումը, ինչպես նաև արտերկրում գտնվող ՀՀ քաղաքացիներին ընտրության իրավունքի ընձեռումը:

1. Նախաբան

Ժամանակակից իրավական պետություններում սահմանադրությունը դիտվում է որպես երկրի գլխավոր օրենք, որի առաջնային նպատակը մարդու հիմնարար ազատությունների ու դրանց իրացումը երաշխավորող մեխանիզմների ամրագրումն է: Այսուամենայնիվ, սահմանադրության սույլ իրավական գործառույթը բավարար պայման չէ հասարակական հարաբերությունները կարգավորելու ու այնտեղ սահմանված գերակայություններն ապահովելու համար: Ժողովրդավար հասարակություններում սահմանադրությունը հանդես է գալիս որպես հասարակական դաշինք, իսկ սահմանադրական մշակույթի ձևավորումը պայմանավորվում է առաջին հերթին սահմանադրական սկզբունքների ու նորմերի մշակման գործընթացում հանրության և քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավվածությամբ:

Թեպետ նորանկախ Հայաստանի 1995 թվականին ընդունված, ապա 2005 թվականին բարեփոխված Սահմանադրությունը դրել է իրավական պետության հիմքերն ու ապահովել ճգնաժամային պայմաններում սահմանադրական ճանապարհով դրանք հարթելու մեխանիզմները, հասարակության մեջ դեռևս գերակշռում է այն կարծիքը, որ Հայաստանում սահմանադրական փոփոխությունների գործընթացները մինչև այժմ նախաձեռնվել են ոչ այնքան հասարակական պահանջի անհրաժեշտությունից, որքան քաղաքական շարժառիթներից ելնելով: 2013 թվականի սեպտեմբերի 4-ի ՀՀ Նախագահի հրամանագրով ձևավորվեց Սահմանադրական բարեփոխումների հանձնաժողով, և փաստացի սկսվեց ՀՀ սահմանադրական փոփոխությունների գործընթացի նոր փուլը: 2014 թվականի ապրիլին հանձնաժողովի ներկայացրած սահմանադրական բարեփոխումների Հայեցակարգի նախագիծը առաջարկում է ծառայած խնդիրների լուծման նոր մոտեցումներ:

Սահմանադրական իրազեկման ծրագրի պատրաստած այս զեկույցն ամփոփում է փորձագիտական հանրության կարծիքը սահմանադրական բարեփոխումների, դրանց անհրաժեշտության ու հայեցակարգում առաջ քաշված հիմնական դրույթների վերաբերյալ: Դիտարկելով Սահմանադրությունը ավելի լայն համատեքստում ու կարևորելով հասարակության ակտիվ մասնակցությունն այդ գործընթացում՝ Սահմանադրական իրազեկման ծրագրի առաջնային նպատակներից են՝ մասնագիտական հանձնաժողովի աշխատանքներին արձագանքելը, հանրային իրազեկում ապահովելը, ինչպես նաև այս գործընթացում քաղաքացիական հասարակության ու փորձագիտական հանրության ներգրավվածությունը խթանելը:

2. Մեթոդաբանություն

Սահմանադրական իրազեկման ծրագիրն առաջնային տվյալների հավաքագրումն իրականացրել է էլեկտրոնային փոստի միջոցով հեռակա հարցման (survey) և փորձագետների հետ խորին հարցազրույցների (in-depth interviews) եղանակներով: Փորձագետների ցանկի ընտրության չափանիշներ են հանդիսացել ա) վերջիններիս անկախությունը, ըստ որի փորձագետը բարեփոխումների հանձնաժողովի անդամ չէ կամ

որևէ կերպ չի ասոցացվում սահմանադրական փոփոխությունների բուն նախաձեռնության հետ, բ) աշխատանքային փորձը իրավակիրառ պրակտիկայում, գ) գիտական փորձը իրավաբանական ու քաղաքական գիտությունների այն ոլորտներում, որոնք առնչվում են մարդու իրավունքների, կառավարման ձևի, կուսակցական և ընտրական համակարգի, ինչպես նաև սահմանադրաիրավական այլ խնդիրների հետ: Ըստ վերոշարադրյալ չափանիշների՝ ծրագրին մասնակցող փորձագետներն համամասնորեն ընտրվել են իրավակիրառ պրակտիկայում, հասարակական կազմակերպություններում և գիտական հանրությունում ակտիվ մասնագետներից: Հարցմանը մասնակցել է նախապես ընտրված 35 փորձագետներից միայն 22-ը. մյուս 13 փորձագետները հրաժարվել են մասնակցել հարցմանը ժամանակի սղության, Հայեցակարգի նախագծին ծանոթացած չլինելու, ինչպես նաև սահմանադրական փոփոխությունների գործընթացում որևէ կերպ ընդգրկվել չջանկանալու պատճառաբանությամբ:

Հարցված փորձագետների հիմնական խմբում են Լարիսա Ալավերդյանը (ՀՀ Մարդու իրավունքների առաջին պաշտպան, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի տնօրեն), Մհեր Արշակյանը (Բեռնի համալսարան, իրավագիտության դոկտոր), Ալեքսանդր Մարկարովը (Երևանի պետական համալսարան, քաղաքական գիտությունների դոկտոր), Գարիկ Քեոյանը (Երևանի պետական համալսարան, քաղաքական գիտությունների դոկտոր), Գոռ Հովհաննիսյանը (Բեռլինի Հումբոլդտի համալսարան, իրավագիտության դոկտոր), Դավիթ Խաչատրյանը (իրավագետ, իրավաբանական գիտությունների թեկնածու), Լարա Ահարոնյանը (Կանանց ռեսուրսային կենտրոն, տնօրեն), Ավետիք Իշխանյանը (Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ), Վարուժան Հոկտանյանը (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի գործադիր տնօրեն), Ռիչարդ Կիրակոսյանը (քաղաքագետ, Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի ղեկավար), Մարո Մաթոսյանը (Կանանց աջակցման կենտրոնի տնօրեն), Արտակ Զեյնալյանը (փաստաբան, «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան հ/կ/), Արթուր Հովհաննիսյանը (ՀՀ փաստաբանների պալատի փոխնախագահ), Խաչիկ Հարությունյան (Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն), Գևորգ Մանուկյան (Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնի նախագահ), Հայկուհի Հարությունյան («Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հ/կ նախագահ), Վահե Գրիգորյանը (փաստաբան, Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոն, Լոնդոն, Միացյալ Թագավորություն), Արայիկ Ղազարյանը (փաստաբան, «Իրավունքների գերակայություն» հ/կ), Լուսինե Մկրտչյանը (փաստաբան, ՀՀ Փաստաբանների պալատ), Տաթևիկ Մատինյանը (փաստաբան, «Ռազմավարական դատավարությունների կենտրոն» հ/կ-ի համահիմնադիր), Հայկ Հովհաննիսյանը (փաստաբան), Նարինե Գասպարյանը (փաստաբան):

Հարցաշարը կազմվել է Հայեցակարգում առաջ քաշված հիմնական դրույթների հիման վրա և ներառում է 18 հարց: Առաջնային տվյալները հավաքագրվել են 2014 թվականի ապրիլի կեսերից մինչև մայիսի վերջ ընկած ժամանակահատվածում:

3. Հիմնական արդյունքներ

3.1. Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն

Հարցված փորձագետների մեծ մասը կարծում է, որ կա սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն: Նրանց կարծիքով նման անհրաժեշտությունը հատկապես բխում է գործող Սահմանադրության ներքո դատական համակարգի անկախության երաշխիքների բացակայությունից, թեև փորձագետների գերակշռող մասը չի առանձնացնում որևէ հստակ առաջարկություն, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ դատական համակարգի անկախությունը բարելավելու նպատակով:

Հատկանշական է, որ փորձագետներից շատերը ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու սահմանադրական բարեփոխումների ներուժը գլխավորապես կապում են արդարադատության դեֆիցիտի հաղթահարման ու դատական իշխանության անկախության ամրապնդման անհրաժեշտության հետ:

Ընդգծվում է նաև Սահմանադրությունում մարդու և քաղաքացու իրավունքների գլխում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը, հատկապես հիմնական իրավունքների դատական պաշտպանության երաշխիքների համատեքստում: Այդուհանդերձ, այստեղ ևս, հարցվածները, որպես կանոն, չեն նշել եղանակներ, որոնց միջոցով սահմանադրական տեքստի փոփոխությունը կհանգեցնի մարդու իրավունքների պրակտիկայի բարելավման: Փոփոխությունների անհրաժեշտությունը փորձագետները հիմնավորում են նաև իշխանությունների տարանջատման ու զսպման անարդյունավետությամբ, թեև այստեղ ևս, նրանք չեն հստակեցնում, թե ինչպես են ակնկալում այս խնդիրների լուծումը սահմանադրական բարեփոխումների միջոցով: Բարեփոխումների անհրաժեշտությունը հարցվածները պայմանավորում են նաև տեղական ինքնակառավարման համակարգի թերզարգացածությամբ: Այսպես, հարցվածների մի զգալի մասը համարում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները գտնվում են մարզպետների վերահսկողության տակ. այսպիսով վտանգվում է ժողովրդավարական ինստիտուտների մեկ այլ կարևոր խումբ՝ տեղական ինքնակառավարումը՝ ի հաշիվ պետական կառավարման:

Որպես սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը հիմնավորող գործոն առավել հաճախ նշվել է դատական իշխանության անկախության ամրապնդման նկատառումը, ապա՝ համապատասխանաբար մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների ամրապնդումը, իշխանությունների տարանջատման ու զսպման արդյունավետության բարձրացումը և տեղական ինքնակառավարման ուժեղացումը: Եզակի արտահայտված անհրաժեշտությունների շարքում նշվել են հակակոռուպցիոն ոլորտում պետության պոզիտիվ պարտականությունների ամրագրումը, Հայոց

սահմանափակության հստակ սահմանումը, դատական իշխանության նկատմամբ սահմանադրական վերահսկողության ամրագրումը:


Հարցվածներից միայն մի քանի փորձագետ չի տեսնում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն կամ դժվարանում է հստակ պատասխան տալ այն հարցին, թե արդյոք այդպիսի անհրաժեշտություն կա: Հարցվածների գերակշռող մասը կարծում է, որ երկրի առջև ծառայած հիմնական մարտահրավերները չեն կարող լուծվել սահմանադրական փոփոխությունների եղանակով:

Հարցումները բացահայտում են պարադոքսալ միտում. թեև հարցվածների մեծ մասը հաստատում է սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը, նրանցից միայն քչերն են համոզված, որ հայեցակարգում նախանշված մարտահրավերները կարող են լուծվել սահմանադրական փոփոխությունների ճանապարհով: Այս միտումը նկատելի է մյուս հարցադրումների համատեքստում ևս: Այսպես, օրինակ, հարցվածների մեծ մասը արդարեցված է համարում մարդու իրավունքների հատվածում կատարվելիք փոփոխությունների նպատակահարմարությունը, թեև, միևնույն ժամանակ, համոզմունք է արտահայտում, որ փոփոխությունները, այնուամենայնիվ, չեն լուծի այդ ոլորտում ծառայած որևէ էական խնդիր:


Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության և առաջարկված հայեցակարգի վերաբերյալ փորձագետների դիրքորոշումների կապը ներկայացված է գծապատկեր 1-ում¹: Տվյալները ցույց են տալիս, որ գոյություն ունի համեմատական կապ հայեցակարգի հանդեպ վերաբերմունքի և սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտության մասին պատկերացումների միջև. նրանք, ովքեր համարում են, որ սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն կա, ավելի շատ կողմ են հայեցակարգին, իսկ նրանք ովքեր չեն տեսնում այդ անհրաժեշտությունը՝ հայեցակարգին հիմնականում դեմ են արտահայտվել:

Հետաքրքրական է դիտարկել նաև սահմանադրական փոփոխությունների՝ ժողովրդավարական գործընթացների վրա ազդեցության և հայեցակարգի նկատմամբ վերաբերմունքի միջև կապը (գծապատկեր 2): Հարցված փորձագետները, ովքեր կողմ են արտահայտվել հայեցակարգին, ավելի շատ են հակված մտածելու, որ սահմանադրական բարեփոխումներն ունեն ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու ներուժ, քան նրանք, ովքեր դեմ են հայեցակարգին

¹ Գծապատկերները կառուցվել են փորձագետների հեռակա հարցման (հարցաթերթ) տվյալների հիման վրա և ներկայացնում են միայն կոնկրետ տեսակետ հայտնած փորձագետների պատասխանները: Նրանք, ովքեր համապատասխան հարցադրումներին դժվարացել են պատասխանել, ներառված չեն:



Գծապատկեր 1. Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունն ըստ հայեցակարգի հանդեպ վերաբերմունքի



Գծապատկեր 2. Ժողովրդավարական գործընթացների վրա սահմանադրական բարեփոխումների ազդեցությունն ըստ հայեցակարգի հանդեպ վերաբերմունքի

3.2. Իշխանությունների նախաձեռնության նկատմամբ վստահություն


Իշխանությունների կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացի հանդեպ փորձագետների վստահությունը ցածր է: Համապատասխան հարցադրմանը տրված պատասխանները բաշխվել են մասամբ վստահում եմ և բոլորովին չեմ վստահում պատասխանների միջև: Հարցաթերթ լրացրած միայն մեկ փորձագետ է ընտրել լիովին վստահում եմ պատասխանը:

Օրագրի շրջանակներում իրականացված հարցումը բացահայտում է բարեփոխումների նկատմամբ վստահության ցածր մակարդակ: Հարցված փորձագետներից միայն մեկն է հայտնել բարեփոխումներին լիովին վստահելու մասին: Մնացած հարցվածների կեսը միայն մասամբ է վստահում իշխանությունների կողմից նախաձեռնված գործընթացին, մինչդեռ մյուս կեսը բոլորովին չի վստահում դրան:

Փորձագետները միայն մասամբ են համաձայն սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի նախագծում վկայակոչված խնդիրների ու դրանց լուծման վերաբերյալ հայեցակարգում տեղ գտած մոտեցումների հետ: Հայեցակարգի որոշ առաջարկություններ որակվել են որպես ծանրակշիռ և ըստ այդմ՝ նաև օգտակար: Այնուամենայնիվ, փորձագետներից շատերը հիմնականում մատնանշում են հայեցակարգի թերություններն ու դրա հետ կապված մտավախությունները: Որպես թերություն հիմնականում առանձնացվում է անհստակ և վերացական ձևակերպումները, հատկապես առկա խնդիրների լուծումների և կոնկրետ մեխանիզմների առումով: Փորձագետներից ոմանք էլ կարծում են, որ հրապարակված հայեցակարգը մշակված է սիրողական մակարդակով ու ավելի շատ էքսպերիմենտ կատարելու տպավորություն է ստեղծում:

Գնահատականներն առավել կոշտանում են սահմանադրական փոփոխությունների քաղաքական շարժառիթների համատեքստում: Որոշ փորձագետներ ընդգծում են, որ նման բարեփոխումների հասարակական և քաղաքական պահանջ գոյություն չունի, և բացի իշխող կուսակցությունից, մյուս կուսակցությունները անտարբեր կամ զուսպ են վերաբերվում առաջարկվող նախագծին: Հիշատակելով սահմանադրական փոփոխությունների նախկին փորձը՝ փորձագետները մտավախություն են հայտնում, որ այս դեպքում էլ սահմանադրական փոփոխությունների նպատակը քաղաքական է՝ իշխանությունների վերարտադրության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու իմաստով: Փորձագետների մեկ այլ խումբ կարևորում է այն հանգամանքը, թե ով է հանդես գալիս սահմանադրական բարեփոխումների նախագծով, ու ինչ պայմաններ են դրա համար ստեղծվում: Հարցվածների մի մասն էլ սահմանադրական բարեփոխումների նկատմամբ անվստահությունը պայմանավորում է իշխանությունների լեգիտիմության դեֆիցիտով: Ըստ այս փորձագետների՝ սահմանադրական փոփոխություն իրականացնելու արդյունավետ ու հանրային վերահսկողության տակ գտնվող գործիքներից մեկը՝ հանրաքվեի ինստիտուտը, ընտրության իրավունքի ձևախեղման արդյունքում ուղղակիորեն դադարել է գործել:

Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի հանդեպ վերաբերմունքի և իշխանությունների նախաձեռնության նկատմամբ ցուցաբերվող վստահության առնչությունը պատկերված է գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Իշխանությունների կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների հանդեպ վստահությունն ըստ հայեցակարգի հանդեպ վերաբերմունքի

Ինչպես երևում է գծապատկերից, հայեցակարգին դեմ արտահայտված ոչ մի փորձագետ չի վստահում իշխանությունների կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացին: Գործընթացին անվստահություն են հայտնում նաև հայեցակարգին կողմ արտահայտվածների կեսը:

3.3. Մարդու իրավունքներ

Հայեցակարգում տեղ գտած մարդու իրավունքներին վերաբերվող դրույթների վերաբերյալ հարցված փորձագետների գնահատականները հիմնականում դրական են: Այնուամենայնիվ ընդգծվում է, որ ներկայացված մոտեցումները թեև ակնկալում են իրավունքի գերակայությանն ուղղված փոփոխություններ, սակայն չեն նախանշում հստակ մեխանիզմներ, որոնք կկիրառվեն նշված նպատակներին հասնելու համար:

Թեև հարցված փորձագետների մեծամասնությունը դրական է գնահատում մարդու իրավունքների պաշտպանության նկատառումներով սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու նախաձեռնությունը, հարցվածներից միայն քչերն են ակնկալում, որ սահմանադրական փոփոխությունները ունեն մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում զգալի ներդրում կատարելու ներուժ:

Հարցվածները տարակարծիք են իրավունքների դասակարգման և սահմանազատման վերաբերյալ հայեցակարգի հեղինակների առաջարկության վերաբերյալ: Հարցվածների մեծ մասը այս առաջարկությունը մասամբ է կողմնակից, մնացածները կամ դեմ են արտահայտվել կամ էլ դժվարացել են պատասխանել: Իրավունքների սահմանազատման կողմնակից փորձագետներից մի քանիսը համաձայն են հայեցակարգում բերված փաստարկներին և կարծում են, որ նման դասակարգումը կարող է որոշակի հստակություն մտցնել պետության կողմից այդ իրավունքների իրացման տեսանկյունից: Մոտեցմանը հակադրվող փորձագետները պնդում են, որ իրավունքների սահմանազատման առաջարկը ընդամենը ոճաբանական և խմբագրային բնույթ կկրի և այդ իրավունքների իրականացման գործնական երաշխիքների իմաստով որևէ ազդեցություն չի ունենա:

Խորքային հարցազրույցների ժամանակ փորձագետների մեծ մասը դժվարացել է պատասխանել նաև այն հարցին, թե արդյոք անհրաժեշտ է սահմանադրությամբ ամրագրել համաչափության սկզբունքը: Այս առաջարկությունը հատկապես կողմ են արտահայտվել այն փորձագետները, ովքեր ունեն սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության փորձ:

3.4. Կառավարման ձևի փոփոխությունը

Բարեփոխումների նախագծի ամենաուշագրավ ու արմատական մոտեցումներից մեկը առկա կառավարման համակարգի թերությունները շտկելու համար կառավարման խորհրդարանական համակարգի անցման առաջարկն է: Նման այլընտրանքի անհրաժեշտությունը հայեցակարգի մշակողները պայմանավորում են այն հանգամանքով, որ մի կողմից խորհրդարանական կառավարման դեպքում անհամեմատ մեծանում է Ազգային ժողովի ինստիտուցիոնալ դերը, մյուս կողմից՝ հաղթահարվում է առաջնային մանդատ ստացած մարմինների համակեցությամբ առաջացող անկայունությունը: Ըստ նախագծի՝ վարչապետը պաշտոնը ստանձնում է խորհրդարանական ընտրությունների արդյունքով, իսկ կառավարություն ձևավորելիս պատասխանատու է միայն Ազգային ժողովի առջև, մինչդեռ Հանրապետության Նախագահը ընտրվում է Ազգային ժողովի կողմից ոչ կուսակցական թեկնածուներից՝ յոթ տարի ժամկետով ու առանց վերընտրման իրավունքի:

Հարցմանը մասնակցած փորձագետների շրջանում գերակշռում է այն կարծիքը, որ խորհրդարանական համակարգին անցումը ներկայումս նպատակահարմար չէ: Խորհրդարանական համակարգին դեմ արտահայտված մասնագետների մոտ հատկապես մտավախություն է առաջացնում այն հանգամանքը, որ Հայաստանում դեռևս կայացած չէ

կուսակցական համակարգը և որ խորհրդարանական համակարգին անցումը կարող է ավելի խթանել դոմինանտ կուսակցության կողմից իշխանության նկատմամբ մենաշնորհը: Հարցվածների մտավախության առարկան է նաև այն, որ ներկայիս խոշոր կուսակցություններում (մասնավորապես իշխող կուսակցությունում) ներկուսակցական ժողովրդավարության բացակայության պայմաններում խորհրդարանական համակարգի անցումը կհանգեցնի ավտորիտար տիպի պարտոկրատիկ պետության վերջնական ձևավորմանը: Հարցվածներից մի քանիսը համոզված են, որ կիսանախագահական համակարգը չի սպառել իրեն և որ ներկա Սահմանադրության լիակատար կիրառման և բավարար քաղաքական կամքի դրսևորման պարագայում Հայաստանը ավելի շատ հնարավորություններ կունենա դիմակայել ներկայիս մարտահրավերներին:

Փորձագետների մեծ մասը կարծում է, որ պետության մեջ առկա խնդիրների ու սահմանադրական ցածր մշակույթի պատճառը ուղղակիորեն պայմանավորված չէ կառավարման համակարգով և որ կառավարման ձևի փոփոխությունը չի կարող լուծումներ տալ այս խնդիրներին:

Խորհրդարանական համակարգի կողմնակից փորձագետները մասամբ համակարծիք են հայեցակարգի հեղինակների հետ, որ այս կառավարման ձևի դեպքում կհաղթահարվի Նախագահի քաղաքական մենիշխանությունը ու իշխանության գերանձնավորման խնդիրը: Այսուամենայնիվ, կողմնակցիների մեծ մասը նաև զգուշացնում է, որ կառավարման նոր մոդելին սոսկ պայմանական անցումը առաջ քաշված խնդիրների լուծման երաշխիք չէ, եթե չի լուծվում դատական իշխանության անկախության, բարեփոխումների հասարակական պահանջի և լեգիտիմ ընտրությունների հարցը:

Ոչ կուսակցական Նախագահը

Խորհրդարանական կառավարման անցման դեպքում Հանրապետության Նախագահին ոչ կուսակցական թեկնածուներից ընտրելու մասին հարցին փորձագետների մեծամասնությունը դժվարանում է պատասխանել՝ նկատելով, որ որևէ ակնկալիք չունի այս առաջարկությունից: Փորձագետների մի մասը կարծում է, որ խորհրդարանական համակարգին անցնելու պարագայում Նախագահը կդառնա զուտ սիմվոլիկ ինստիտուտ՝ առանց իրական իշխանության: Մի քանիսն էլ կարծում են, որ ավելի նպատակահարմար կլինի, որ Հանրապետության Նախագահը պաշտոնավարման պահից հրաժարվի իր կուսակցական անդամությունից:

Նախագահի և Ազգային Ժողովի ընտրությունների համատեղումը

Ներկայիս կիսանախագահական կառավարման համակարգին բնորոշ խնդիրների լուծման վերաբերյալ հայեցակարգային մոտեցումներից ամենահստակ ձևակերպումը ստացել է երկու առաջնային մանդատով օժտված իշխանության մարմինների՝ ՀՀ Նախագահի ու Ազգային Ժողովի ընտրությունները միաժամանակ անցկացնելու առաջարկը: Հարցմանը մասնակցած փորձագետներից գերակշիռ մեծամասնությունը

բացասական է վերաբերվում այս առաջարկին: Արտահայտված մտավախությունների շարքում առավել հաճախ հնչել է այն, որ անցումային ժողովրդավարություններում ընտրությունների մեկտեղումը հղի է իշխանության վերաբարտադրման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ: Փորձագետների շրջանում առկա է նաև այն մտավախությունը, որ ընտրությունների համատեղումը կհանգեցնի նրան, որ իշխանությունները ավելի հեշտությամբ կկոնսուլիդացնեն իրենց ֆինանսական, վարչական և այլ ռեսուրսները՝ մեկ ընտրությամբ իրենց վերաբարտադրությունն ապահովելու համար:

ՀՀ Նախագահի ու Ազգային Ժողովի ընտրությունները միաժամանակ անցկացնելու առաջարկությանը դեմ է արտահայտվել հարցմանը մասնակցած փորձագետների գերակշիռ մեծամասնությունը: Այս կապակցությամբ արտահայտած մտավախությունների շարքում առավել հաճախ հնչել է այն, որ անցումային ժողովրդավարություններում ընտրությունների մեկտեղումը հղի է իշխանության վերաբարտադրման համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ:

3.5. Ընտրական համակարգ

Չնայած հայեցակարգը չի նախանշում՝ ինչ ընտրական համակարգ է նախատեսվում ապագայում, այսուամենայնիվ ընդգծում է գործող ընտրական համակարգի փոփոխության անհրաժեշտությունը: Հայեցակարգի հիմնական շեշտադրումներից մեկը կայուն ընտրական համակարգի ստեղծումն է ու դրա հիմնական տարրերի սահմանորոշումը ամրագրումը: Նոր ընտրական համակարգի ձևավորումը, ըստ նախագծի, պետք է խթանի պետությունում երկբևեռ համակարգն ու կուսակցությունների խոշորացման գործընթացը:

Հարցված փորձագետների գերակշիռ մասը տեսնում է ընտրական համակարգի որոշ փոփոխությունների անհրաժեշտություն՝ միաժամանակ հավելելով, որ արդար ընտրությունների կազմակերպումը բնավ պայմանավորված չէ ընտրական համակարգով: Փորձագետների կողմից առաջարկվող փոփոխությունների շրջանակը մեծ չէ. հարցվածները հիմնականում կարևորում են ընտրությունների ավարտին ընտրողների ցուցակների հրապարակումը: Փորձագետների այլ առաջարկություններից են արտերկրում գտնվող Հայաստանի քաղաքացիներին ընտրության հնարավորություն ընձեռումը և ընտրողների իրավունքների բողոքարկման համար տրամադրված ժամկետների ընդլայնումը:

Ընտրական համակարգի փոփոխությունների կողմնակիցներից միայն երեքն են կողմ լրիվ մեծամասնական համակարգի ներդրմանը: Փորձագետների մեծ մասը ներդաշնակված համամասնական ու մեծամասնական ընտրական համակարգի կողմնակից են:

Սահմանադրական լուծումների միջոցով կուսակցությունների խոշորացման հայեցակարգային մոտեցումը գրեթե բոլոր փորձագիտների մոտ տարակասուսանք է առաջացնում: Մի մասը համարում է, որ հայեցակարգը որևէ հիմնավորում չի ներկայացնում այս հարցի վերաբերյալ, ու դժվար է հասկանալ, թե ինչ նպատակ է հետապնդում այն: Մյուս մասը կուսակցությունների խոշորացումը դիտարկում է որպես քաղաքական դաշտի էվոլյուցիայի բնականոն հետևանք, այլ ոչ թե սահմանադրական փոփոխությունների խնդիր: Միայն չորս փորձագետ է կարծում, որ հայեցակարգային այս լուծումը կնպաստի կայուն կուսակցական համակարգի ձևավորմանը:

Հարցված փորձագետների գերակշիռ մեծամասնությունը համակարծիք է հայեցակարգում տեղ գտած այն առաջարկի հետ, ըստ որի նախատեսվում է վերանայել ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքը և սահմանափակել այն միայն ծանր հանցագործության դեպքում: Այնուամենայնիվ, որոշ փորձագետներ մտավախություն ունեն, որ դատապարտյալներին ընտրական իրավունքով օժտելը կարող է մեծացնել ընտրակեղծիքների ծավալները:

3.6. Դատական համակարգ

Թեև հայեցակարգում անկախ դատական իշխանության կայացումը դիտարկվում է որպես առաջնահերթություն, վերջինիս կայացմանն ուղղված հայեցակարգային դրույթները գնահատվել են որպես բավականին ընդհանրական: Կոնկրետ առաջարկներից առանձնանում են դատական ատյանների թվի կրճատման (եռաստիճանից՝ երկաստիճան) և երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրման առաջարկությունները:

Դատական ատյանների կրճատումը

Այս հարցերի շուրջ փորձագիտական հանրությունն ունի հակադիր կարծիքներ: Փորձագետների մի մասը (հիմնականում փաստաբանները) դատական ատյանների կրճատումն ու երկրորդ ատյանում վերաքննության և վճարելիության լիազորությունների ներառումը համարում է նպատակահարմար այն հիմնավորմամբ, որ ներկայիս եռաստիճան համակարգի որոշ օղակներ արդյունավետ դատական պաշտպանության երաշխիք չեն հանդիսանում (մասնավորապես, ՀՀ Վերաքննիչ դատարանը չի իրականացնում արդար դատաքննություն, և գործնականում իրավունքի պաշտպանության «անպետք օղակ է»): Ըստ այս փորձագետների՝ նման բարեփոխումը կարող է խնայել պետական ռեսուրսները, կրճատել դատավարության ժամկետները, ինչպես նաև նվազեցնել դատական սխալները, մինչդեռ դեմ արտահայտվող փորձագետների մոտ կարծիք է հնչում, որ փոփոխությունն է ինքին ծախսատար ու աշխատատար: Առաջարկի նկատմամբ բացասական դիրքորոշում ունեցող փորձագետներն այս հարցը դիտարկում են ավելի լայն կոնտեքստում՝ համարելով, որ դատական ատյանների քանակի ու դատական համակարգի անկախության կապն

ուղղակի չէ, ու նման փոխադասությամբ երկրում արդարադատության վիճակը չի բարելավվի:

Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը

Ի տարբերություն ասյանների կրճատման մոտեցման, երդվյալ ատենակալների ինստիտուտի նկատմամբ անվստահություն կա փորձագետների ճնշող մեծամասնության մոտ: Դեմ արտահայտվող բոլոր փորձագետները բերում են միանման փաստարկներ՝ հիմնականում այն մասին, որ Հայաստանի Հանրապետությունում սերտ ազգակացական կապերի առկայությունը, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վատ պայմանները անարդյունավետ են դարձնում երդվյալ ատենակալների մասնակցությամբ դատավարության անցկացումը:

Կողմ արտահայտվող մի քանի փորձագետներ դիտարկում են այս ինստիտուտը որպես անկախ դատական համակարգի կարևոր տարր՝ մինչև ժամանակ ընդգծելով, որ այն կարող է գործել միայն գործերի ու ատենակալների ընտրության խելամիտ մեխանիզմներ ներդնելու դեպքում:

Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը հարցված փորձագետների գերակշռող մեծամասնությունը թերհավատորեն է մոտեցել՝ համարելով, որ ատենակալների ինստիտուտի ներդրումը լուրջ վտանգներ է պարունակում:

3.7. Հանրաքվե

Չնայած հանրաքվեի ինստիտուտի գլուխը հայեցակարգի տեքստում մեծ տեղ չի զբաղեցնում՝ այնտեղ առկա են փորձագետների ուշադրությանն արժանացած մի քանի շեշտադրումներ: Դիտարկելով հանրաքվեն որպես անմիջական ժողովրդավարության միջոց՝ հայեցակարգը խնդիր է դնում հստակեցնել հանրաքվեի օբյեկտներն ու սուբյեկտները, սահմանադրորեն ամրագրել հարցերի շրջանակը, որոնք չեն կարող դրվել հանրաքվեի, ներդնել քաղաքացիական նախաձեռնությամբ հանրաքվեի ինստիտուտը: Այսուամենայնիվ, տարածաշրջանում ընթացող ինտեգրացիոն գործընթացների ու աշխարհաքաղաքական այլ զարգացումների համատեքստում ամենաուշագրավ կետը հայեցակարգի այն առաջարկությունն է, ըստ որի՝ հանրաքվեի են դրվելու երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը:

Այս առաջարկությունը դրական է ընդունվում հարցված փորձագետների մեծամասնության կողմից: Նման անհրաժեշտությունը փորձագետների կողմից հիմնավորվում է նրանով, որ հանրաքվեն ժողովրդավարության զարգացման անկունաքարերից է, և հատկապես հանրային ամենակարևոր որոշումները պետք է կայացվեն անմիջականորեն սուվերեն սուբյեկտի՝ ժողովրդի կողմից: Ավելին, ըստ կողմ արտահայտվող փորձագետների՝ պետության ինքնիշխանության ու տարածքային հարցերի վերաբերյալ հանրաքվեները համապատասխանում են միջազգային լավագույն պրակտիկային:

Որոշ փորձագետների մոտ այս սկզբունքը մտավախություն է առաջացնում հատկապես ընտրությունների լեգիտիմության առումով: Ըստ այդ կարծիքների՝ տեղեկատվության պակասը, ինչպես նաև իշխանությունների քարոզչական մանիպուլյացիաները կարող են պետությունը կանգնեցնել ինքնիշխանության կորստի վտանգի առջև: Մյուս կողմից տեսակետ է հնչում, որ հանրաքվեի ինստիտուտի ընդլայնումը իշխանություններին քաղաքական և իրավական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն կընձեռի կարևորագույն որոշումներ կայացնելիս: Մի քանի փորձագետ նաև համարում է, որ ինքնիշխանության սահմանափակում ենթադրող որևէ հարց հանրաքվեի դրվել չի կարող, քանի որ գործող Սահմանադրության ինքնիշխանությունն ամրագրող հոդվածները ինքնիշխանության որևէ սահմանափակում չեն ենթադրում և փոխիմասն ենթակա չեն:

Հայեցակարգի առաջարկությունը, ըստ որի հանրաքվեի են դրվելու երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը, դրական է ընդունվում հարցված փորձագետների մեծամասնության կողմից:

3.8. Տեղական ինքնակառավարման համակարգ

Տեղական ինքնակառավարման մարմինների բարեփոխումներին նվիրված գլուխը նույնպես համառոտ է և ըստ փորձագետների՝ վերացական ու անհստակ:


Հայեցակարգում, մասնավորապես, կարևորվում է ավագանու դերի ամրապնդումը տեղական ինքնակառավարման համակարգում, այդ մարմինների սահմանադրական կարգավիճակի ամբողջականացումը քաղաքական համակարգում: Չնայած շեշտվում է, որ միջհամայնքային մարմինների ձևավորումը ներկայիս Սահմանադրությամբ համապատասխանում է Տեղական ինքնակառավարման եվրոպական Խարտիայի դրույթներին, այսուհանդերձ, առաջարկվում է մտածել նաև այնպիսի միջհամայնքային նոր կազմավորումների մասին, որոնք գործնական մակարդակում կխթանեն համագործակցությունը իրար միջև՝ ֆինանսական ու մարդկային ռեսուրսն ավելի նպատակային օգտագործելով:

Փորձագետները, ընդհանուր առմամբ, դրական են արձագանքում այս հայեցակարգային դրույթներին: Նրանք, սակայն, դժվարացել են ավելի հստակ գնահատականներ տալ, քանի որ, ինչպես նշվեց, հայեցակարգը այս մասում չի պարունակում որևէ հստակ առաջարկություն:

Փորձագետները, ընդհանուր առմամբ, դրական են արձագանքել տեղական ինքնակառավարման ոլորտի կատարելագործման վերաբերյալ հայեցակարգում

արտահայտված մոտեցումներին, մասնավորապես՝ ավագանու դերի բարձրացման մտադրություններին: Այնուամենայնիվ, փորձագետների մեծ մասը կարծում է, որ հայեցակարգի՝ տեղական ինքնակառավարմանը նվիրված գլուխը բավարար առարկայական չէ:

Փորձագիտական հարցման արդյունքները ցույց են տալիս Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի և նրանում ներառված առանձին փոփոխությունների/կետերի հանդեպ դիրքորոշումների միջև ոչ միարժեք կապ. հայեցակարգին կողմ արտահայտված շատ փորձագետներ դեմ են նրանում ներառված մի շարք փոփոխությունների, և, հակառակը, հայեցակարգին դեմ հարցվածներն անհրաժեշտ են համարում որոշակի փոփոխություններ: Նշված փոխառնչությունը ներկայացված է գծապատկեր 4-ում, որտեղ ցույց է տրված հայեցակարգին կողմ և դեմ արտահայտվածների տեսակետները հարցման մեջ ներառված տասներկու առանցքային փոփոխությունների վերաբերյալ:



Գծապատկեր 4. Հայեցակարգի առանձին փոփոխությունների հանդեպ վերաբերմունքն ըստ հայեցակարգի հանդեպ ընդհանուր մոտեցման

1. Դասական հիմնական և սոցիալական իրավունքների սահմանազատում
2. Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները նույն օրը կազմակերպելու առաջարկ
3. Կիսանախագահական համակարգից անցում կառավարման խորհրդարանական համակարգի
4. Հանրապետության Նախագահին ոչ կուսակցական թեկնածուներից ընտրելու առաջարկ
5. Գործող ընտրական համակարգի փոփոխություն
6. Ընտրություններ մեծամասնական համակարգով
7. Կուսակցությունների խոշորացման մասին հայեցակարգային մոտեցում
8. Ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման վերանայում
9. Դատական ատյանների քանակի կրճատում
10. Երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրում
11. Երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը հանրաքվեի դնելու առաջարկ
12. Տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ ներկայացված հայեցակարգային դրույթներ

=====

Ըստ գծապատկերի՝ հայեցակարգի կողմնակիցներն ամենաշատը համամիտ են 11-րդ (երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը հանրաքվեի դնելու առաջարկ), ապա՝ 8-րդ (ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման վերանայում) և 1-ին (դասական հիմնական և սոցիալական իրավունքների սահմանազատում) փոփոխությունների հետ: Միաժամանակ, նրանք խիստ անհամաձայնություն են հայտնում 2-րդ (Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները նույն օրը կազմակերպելու առաջարկ), ապա՝ 3-րդ (կիսանախագահական համակարգից անցում կառավարման խորհրդարանական համակարգի), 6-րդ (ընտրություններ մեծամասնական համակարգով) և 10-րդ (երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրում) կետերին:

Հայեցակարգին դեմ հանդես եկողները հիմնական փոփոխությունների հանդեպ արտահայտել են ավելի շատ բացասական, քան դրական մոտեցում: Այսպես, նրանք առավելապես դեմ են 3-րդ (կիսանախագահական համակարգից անցում կառավարման խորհրդարանական համակարգի), 7-րդ (կուսակցությունների խոշորացման մասին հայեցակարգային մոտեցում) և 10-րդ (երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրում) կետերին: Սակայն, չնայած հայեցակարգի հանդեպ բացասական մոտեցմանը, մի շարք փոփոխություններ նրանց կողմից գնահատվել է դրական: Դրանք են՝ 11-րդ (երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը հանրաքվեի դնելու առաջարկ) և 12-րդ

(տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ ներկայացված հայեցակարգային դրույթներ) կետերը:

Ամենաբացասականն ընկալվել են (հայեցակարգին թե՛ դեմ, թե՛ կողմ արտահայտվածների մեջ) Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները նույն օրը կազմակերպելու, կիսանախագահական համակարգից խորհրդարանականին անցնելու առաջարկները, ինչպես նաև երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրումը:

Ամենաշատը դրական են գնահատվել (հայեցակարգին թե՛ դեմ, թե՛ կողմ արտահայտվածների մեջ) երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը հանրաքվեի դնելու առաջարկը, ազատագրված դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակման վերանայումը, դասական հիմնական և սոցիալական իրավունքների սահմանազատումը:

Այսպիսով, Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում առկա են փոփոխություններ, որոնք անընդունելի են փորձագետների համար՝ անկախ հայեցակարգի հանդեպ նրանց մոտեցումից: Եվ հակառակը, կա փոփոխությունների պահանջ, ինչը փորձագետներից շատերը համամիտ չեն իրականացնել ներկայացված հայեցակարգի փաթեթով:

4. Փորձագետների առաջարկություններ

Հարցման վերջում փորձագետներին առաջարկվել է անդրադառնալ այն փոփոխություններին, որոնք, իրենց կարծիքով, կարող են դառնալ սահմանադրական բարեփոխումների առարկա, սակայն տեղ չեն գտել հայեցակարգում: Հարցված փորձագետների կեսից ավելին առանձնացրել է սահմանադրական տարբեր ոլորտներին առնչվող փոփոխությունների առաջարկներ, որոնցից շատերը, այնուամենայնիվ, բավականին ընդհանրական են. փորձագետները երբեմն առաջարկում են «բարելավել» կամ «կատարելագործել» սահմանադրական այս կամ այն ինստիտուտը, սակայն չեն հստակեցնում, թե ինչպես են տեսնում առանձնացված խնդիրների ու մարտահրավերների լուծումները Սահմանադրության տեքստի փոփոխության ճանապարհով:

Սահմանադրական կարգի հիմունքների գլխում առաջարկվում է Սահամադրության առաջին ու երկրորդ հոդվածների հետ մեկտեղ փոփոխման ոչ ենթակա համարել նաև երրորդ հոդվածը: Առաջարկ կա նաև փոփոխել Սահամադրության հոդված 8.2-ը՝ ճշգրտելով, որ ՀՀ պաշտպանության պետական լիազորված մարմնի (ՊՆ) զինված ուժերը չեն կարող օգտագործվել հասարակական կարգի պահպանման կամ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովելու նպատակով:

Մարդու հիմնարար իրավունքների ոլորտում առաջարկվում է փոփոխության ենթարկել Սահամանադրության 19-րդ հոդվածը՝ ամրագրելով, որ հանրային շահերի պաշտպանությամբ դատարան կարող են դիմել նաև իրենց կանոնադրությամբ նման շահերի պաշտպանության նպատակ հետապնդող իրավաբանական անձինք: Ըստ մեկ այլ

առաջարկության՝ նպատակահարմար է Սահմանադրությամբ թույլատրել, որ հանրային մարմնի կողմից ընդունված ցանկացած իրավական ակտի սահմանադրականությունը վերահսկվի անհատական դիմումների միջոցով: Այս ոլորտին է առնչվում նաև հասարակության խոցելի խմբերի համար (հաշմանդամներ, ազգային փոքրամասնություններ) ԱԺ-ում Սահմանադրությամբ պարտադիր մանդատ ապահովելու առաջարկը:

Ընտրական համակարգում ամենաուշագրավ և հաճախ հանդիպող առաջարկը ընտրությունների ավարտին ընտրողների ցուցակի հրապարակումն է: Այլ առաջարկների թվում են արտերկրում գտնվող Հայաստանի քաղաքացիներին ընտրության հնարավորություն ընձեռումը և ընտրողների իրավունքների բողոքարկման համար տրամադրված ժամկետների ընդլայնումը: Կա նաև առաջարկություն սահմանադրորեն սահմանափակել ընտրություններում և հանրաքվեներում զինծառայողների մասնակցությունը ծառայության ժամկետի ողջ ընթացքում՝ այդ սահմանափակումը փոխհատուցելով սոցիալական ավելի ընդարձակ իրավունքներով:

Դատական իշխանության ոլորտում առաջարկներն առավել վերացական են. մասնավորապես առաջարկվում է սահմանադրական ճանապարհով ստեղծել դատական իշխանության անկախության երաշխավորման իրական մեխանիզմներ: Այս համատեքստում կարևորվում է Արդարադատության խորհրդի անկախությունը: Փորձագետներից մի քանիսը առաջարկում Սահմանադրության մեջ ամրագրել այն դրույթը, որով դատավորին նշանակում է ոչ թե ՀՀ Նախագահը, այլ Արդարադատության խորհուրդը:

Անդրադարձ կա նաև ԱԺ մշտական հանձնաժողովների ձևավորման կարգին: Փորձագետներից մեկն առաջարկում է փոփոխել Սահմանադրության 73-րդ հոդվածը՝ ամրագրելով, որ ԱԺ ժամանակավոր հանձնաժողով կարող է ստեղծվել է նաև առնվազն տաս հազար քաղաքացու ստորագրության պահանջի դեպքում:

Տեղական ինքնակառավարման համակարգում առաջարկվում է վերացնել մարզպետների ինստիտուտը:

Առաջարկությունների թվում են Սահմանադրության մեջ հակակոռուպցիոն դրույթների ներառումը, այդ թվում՝ կոռուպցիայի դեմ պայքարում պետության պոզիտիվ պարտականության ամրագրումը, Հայոց պահանջատիրության հստակ սահմանումը, ինչպես նաև դատական իշխանության նկատմամբ սահմանադրական վերահսկողության ամրագրումը:

Հավելված 1: Հարցաշար

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՋԵԿՄԱՆ ԾՐԱԳԻՐ

21.04. 2014

Հարգելի փորձագետ.

Այս հարցաշարը մշակվել է Սահմանադրական իրազեկման ծրագրի շրջանակներում՝ սահմանադրական փոփոխությունների հայեցակարգի վերաբերյալ հասարակական կազմակերպությունների ու անկախ փորձագետների կարծիքներն ու տեսակետները հավաքագրելու և ամփոփելու նպատակով: Ձեր տեսակետը շատ արժեքավոր է առաջարկված փոփոխությունների վերաբերյալ մասնագիտական կարծիքը բացահայտելու համար: Խնդրում ենք Ձեզ ժամանակ տրամադրել և ներկայացված հարցերին տալ հիմնավոր պատասխաններ: Հավաստիացնում ենք, որ Ձեր պատասխաններն առանձին հրապարակման ենթակա չեն, այլ ներկայացվելու են ընդհանրացված տեսքով: Շնորհակալություն:

1. Խնդրում ենք ստորև լրացնել Ձեր տվյալները

.....

Անուն, ազգանուն

.....

Կազմակերպության անվանում

2. Ասացեք խնդրե՞մ՝ կո՞ղմ եք Սահմանադրական բարեփոխումների առաջարկված հայեցակարգին:

- Լիովին կողմ եմ
- Մասամբ կողմ եմ
- Բոլորովին կողմ չեմ
- Դժվարանում եմ պատասխանել

Եթե կողմ չեք, խնդրում ենք նշել դեմ լինելու երեք հիմնական պատճառ:

- ...
- ...
- ...

3. Ըստ Ձեզ՝ կա՞րողոք սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտություն:

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

Խնդրում ենք ստորև համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը

.....

4. Ձեր կարծիքով՝ սահմանադրական բարեփոխումները ունե՞ն ժողովրդավարական գործընթացների վրա ազդելու զգալի ներուժ: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո

- Ոչ

- Դժվարանում եմ պատասխանել

5. Վստահու՞մ եք իշխանությունների կողմից նախաձեռնված սահմանադրական բարեփոխումների գործընթացին:

- Լիովին վստահում եմ
- Մասամբ վստահում եմ
- Բոլորովին չեմ վստահում
- Դժվարանում եմ պատասխանել

Խնդրում ենք ստորև համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը

.....

6. Ինչպես հավանաբար գիտեք, հայեցակարգով առաջարկվում է իրականացնել իրավունքների որոշակի դասակարգում, ինչպես նաև սահմանազատել դասական հիմնական և սոցիալական իրավունքները: Կո՞ղմ եք այս մոտեցմանը:

- Լիովին կողմ եմ
- Մասամբ կողմ եմ
- Բոլորովին կողմ չեմ
- Դժվարանում եմ պատասխանել

Խնդրում ենք ստորև համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը

.....

.....

7. Համամիտ եք ներկայիս կիսանախագահական մոդելի պահպանման դեպքում Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի ընտրությունները նույն օրը կազմակերպելու առաջարկությանը: Խնդրում ենք հիմնավորել Ձեր դիրքորոշումը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

8. Արդյո՞ք անհրաժեշտ եք համարում ներկայումս սահմանված/գործող կիսանախագահական համակարգից անցում կատարել կառավարման խորհրդարանական համակարգի:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

9. Համաձայն եք Հանրապետության Նախագահին ոչ կուսակցական թեկնածուներից ընտրելու առաջարկվող մոտեցմանը (խորհրդարանական համակարգի անցման դեպքում): Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

10. Արդյո՞ք անհրաժեշտ եք համարում փոփոխել գործող ընտրական համակարգը: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....

.....

- Ոչ

.....

.....

- Դժվարանում եմ պատասխանել

11. Ըստ Ձեզ՝ մեծամասնական համակարգով ընտրություններն ավելի նպատակարար կլինեին: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո

.....

.....

- Ոչ

.....

.....

- Դժվարանում եմ պատասխանել

12. Համաձայն եք կուսակցությունների խոշորացման մասին հայեցակարգային մոտեցմանը: Խնդրում ենք համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո

.....

.....

- Ոչ

.....

.....

- Դժվարանում եմ պատասխանել

13. Արդյո՞ք անհրաժեշտ է վերանայել ազատագրկման դատապարտված և պատիժը կրող անձանց ընտրելու իրավունքի սահմանափակումը: Խնդրում ենք համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո

.....

.....

- Ոչ

.....

.....

- Դժվարանում եմ պատասխանել

14. Արդյո՞ք նպատակահարմար էք համարում դատական ատյանների քանակի կրճատումը (եռաստիճանից երկաստիճան): Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

15. Կո՞ղմ եք հայեցակարգով առաջարկվող երդվյալ ատենակալների ինստիտուտի ներդրմանը: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

16. Արդյո՞ք անհրաժեշտ է հայեցակարգի այն առաջարկությունը, ըստ որի հանրաքվեի պետք է դրվեն երկրի ինքնիշխանության մասնակի սահմանափակումներ ենթադրող միջազգային կազմակերպություններին միանալու հարցերը: Խնդրում ենք հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....
- Դժվարանում եմ պատասխանել

17. Կո՞ղմ եք տեղական ինքնակառավարման համակարգի վերաբերյալ ներկայացված հայեցակարգային դրույթներին: Խնդրում ենք համառոտ հիմնավորել Ձեր պատասխանը:

- Այո
.....
.....
- Ոչ
.....
.....

- Դժվարանում եմ պատասխանել

18. Կա՞ն արդյոք բարեփոխումների ենթակա սահմանադրական դրույթներ, որոնք Ձեր կարծիքով տեղ չեն գտել տվյալ հայեցակարգում

- Այո
- Ոչ
- Դժվարանում եմ պատասխանել

19. Եթե այո, խնդրում ենք ներկայացնել գործող Սահմանադրության անհրաժեշտ փոփոխությունների վերաբերյալ երեք առաջնային առաջարկություն

- ...
- ...
- ...

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար